



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԿՈՆԴԱԿ

ՀԱՐՍԱՆԵԱՑ



392 ✓

Կ-70




392  
4-70

06 DEC 2011

06 DEC 2011

ԿՈՆԴԱԿ

ՀԱՐՍԱՆԵԱՅ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏԷՐ.ՆԵՐՍԻՍԵԱՆ

1903



23 MAY 2013

55.591



**ՄԱՂԱՔԻԱ ԵԱՌԱՅ ՅԻՄՈՒՍԻ  
ՔՐԻՍՏՈՍԻ,** ուղարժողովարժ արժարժան  
չժժ ԵՒ ԳՔՈՒՔԵԱՄԲ ՄԻԱԵՆԻ ՈՐԴԻՈՅՆ  
ԵՒ ՇԼՈՐՃԻՒ ՍՈՒՐԲ ԷՈԳԻՈՅՆ ԵՒ ԿԱՄՕՔ  
ԱԶԳԻՆ, ԱՐՔԵՓՈՍԿՈՂՈՍ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ  
ԵՒ ՊԱՏՐԻԱՐԻ ԷԱՅՈՅ ՔՈՒՐԲԻՈՅ, ընծայեմմ ող-  
ջոյն սիրոյ եւ օրհնութիւն ասուածային եւ մաղթանա  
բարեաց եւ յաջողութեանց, հարազատ ուղւոցդ Հայ-  
Ողղափառ սուրբ Եկեղեցւոյս, սիրեցելոց Մերոց սի-  
րակցորդ ամուլիցդ, Փեսայիդ եւ Հարսինդ, որ մա-  
նեմք ընդ լծով ամուսնութեան ի միութիւն սրբոյ եւ  
խորհրդական Պապի ըստ օրինաց եւ կանոնաց Եկե-  
ղեցւոյ, եւ ըստ օրինական հրամանի Մերոյ տուելոյ  
ձեզ յանուն Տեառն :



2706 - 85



**ՄԱՐԳՌԻՆ** կեանքին ամենէն նշանաւոր մի կէսն է ամուսնութեան պարագայն, յորում երկու անհատներ այլեւս իրարու կը կապուին Պսակի Սուրբ Խորհրդոյն զօրութեամբ, եւ ըստ ինքեան անլուծանելի եւ ցկեանս տեւող միաւորութեամբ, եւ այսպէս իրենց ապագայ կեանքին հիմնական եւ հաստատուն ձեւն ու կերպը կը կազմեն: Արթուն խոհականութիւն եւ ըւրջ որոշողութիւն այնչափ աւելի անհրաժեշտ է, որչափ գործին կարեւորութիւնը մեծ է եւ տեւողութիւնը երկար եւ հետեւանքները ծանր: Ամուսնութեան գործը արժանի է ուրեմն որ անոր ներքեւ մտնողներուն կողմէ խիստ լըջութեամբ եւ արթնութեամբ պատրաստուի եւ կատարուի:

Սիրելիք, ձեր ծնողքները կամ խնամակալները, ձեր խոստովանահայրերը եւ եկեղեցւոյ պաշտօնեայնները, ձեր բարեկամները եւ խրատողները բաւական խօսած եւ բացատրած պէտք է լինին այդ կէտերը, դուք ալ ձեր նախընթաց կեանքին մէջ բաւական բան լսած եւ հասկացած էք: Նոյն խօսք Պսակի Սուրբ Խորհրդոյն կատարման առթիւ կը կրկնուին ձեզ կարեւոր խրատներն ու սկզբունքները, սակայն Մեք ալ իբր ձեր առաջնորդն ու հովիւը պարտականութիւն կ'ըզամք ձեր վիճակին ու կացութեան պէտք եղած խրատները անգամ մ'ալ յիշեցնել եւ գրով ալ յանձնել ձեր ձեռքը, որպէս զի իբր մշտաբարբառ քարոզ հնչեն ձեր ականջը. եւ իբր մշտատեւ յիշատակ կենան ձեր աչքին հանդէպ, եւ ամեն ժամանակ անմուտց մնան անոնք ձեր միտքին մէջ եւ անջնջելի ձեր սիրտին վրայ:

**Ա.** — Այն որոշումը՝ որով դուք երկուքնիդ, սիրելիք, ձեր կեանքը իրարու կը կապէք, գեղեցիկ եւ օրինական եւ իմաստուն մի գործ է, որովհետեւ ասուածային կամաց համաձայն է, որ 'ի սկզբանէ անտի իւր պատգամը արձակեց, թէ «Ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել»: Անոնք որ ամուսնական լուծէն կը խորշին՝ աստուածադիր լուծէն կը փախչին, որուն միակ արգարացումը կուսակրօն հողեւորականութեան ծանրագոյն լուծին հետ փոխանակուելը կրնար ըլլալ. եւ ոչ թէ լուծէ ազատ աշխարհային աղիկամի կենցաղը:

**Բ.** — Մարդ ի բնէ ընկերական է, եւ ընկերակա՛նութեան առաջին տարրը ընտանիքն է, ընտանիքի կազմութիւնն ալ ամուսնական միաւորութիւնն է: Աստուածադիր հրամանին հետ մարդկութեան բնական օրէնքն ալ ամուսնութեան անհրաժեշտ կարեւորութիւնը կը ցուցնէ, եւ ձեր կողմանէ փափարուած ամուսնութեան կապը կրկնակի դուլելի եւ ծանրակշիռ գործ մ'է, եւ երբ զայն սիրով կ'ստանձնէք, պէտք է այդ բարձր սկզբունքները միտուրնիդ տպաւորէք:

**Գ.** — Օրինական գործերու կատարումը օրինական հանգամանքներուն հետ կապուած է ներքին կերպով, երբոր հանգամանքները կը շեղին իրենց օրինական ճանպէն, զարմանալի չէ որ գործն ալ վտանգուի եւ խանգարուի: Ամուսնութիւնը, սիրելիք, ոչ պարզապէս անձնական հաճոյից միջոց է, ոչ դրամ ձեռք ձգելու եղանակ է, ոչ անուղղակի նպատակներու հասնելու ճանպայ է: Այս տեսակ շարժառիթներով եղած ամուսնութիւններ ընտանեկան երջանկութիւն չեն բերեր, եւ բոլոր ընտանեկան ձախողութեանց պատճառները այդ անու-



դիզ ընթացքին մէջ փնտռելու է, ինչ որ ամենօրեայ փորձառութիւնն ալ կատարելապէս կը հաստատէ:

Գ. — Աշխարհ եւ աշխար իրարու շատ մօտ են, եւ անոր համար միշտ կը կրկնուի թէ մեր սովորական կեանքը առանց ցաւի եւ առանց վիշտի չկրնար լինել: Ամուսնական կեանք եւ ընտանիք ալ որ աշխարհի մէջ են, աշխարհի մասը անոնք ալ պիտի ունենան: Բայց այս պարագայն չկրնար մարդը ամուսնական կեանքէ խորչեցընել. ընդհակառակն ամեն տեսակ ցաւերու եւ վիշտերու մէջ թեթեւագոյն է այն, որ սրտակից ընկերակցի մը վշտակցութեամբ կը մեղմանայ, որ սիրալից գորովներու մասնակցութեամբ կը թեթեւնայ: Ընտանեկան կեանքը երբ ճշմարիտ է եւ ուղիղ, ցաւերու դարման է, ցաւերու պատճառ չէ:

Ե. — Երբ եկեղեցւոյ պաշտօնեայն՝ յանուն Աստուծոյ ձեզ միաւորած ատեն կը յիշեցնէ համարձակաբերան թէ աշխարհիս վրայ պէսպէս փորձութիւնք կան, թէ հիւանդութիւն, թէ աղքատութիւն եւ թէ այլ ինչ նեղութիւն, ասով կ'ուզէ ձեզ զգուշացնել՝ որ չըլլայ թէ ընտանեկան կեանքը արտաքին դիւրութեանց եւ հաճոյից համար սահմանեալ բան մը կարծէք, այլ համոզուած ըլլաք թէ աշխարհի ամեն ձախող պատահարաց հանդէպ երկոյքեանքդ մինչեւ ի մահ միմեանց օգնութիւն պարտիք ընել. եւ այդ փոխադարձ սիրոյ եւ օգնութեան մէջ պիտի փնտռէք ձեր յաջողութիւնն ալ, ձեր մխիթարութիւնն ալ, ձեր երջանկութիւնն ալ:

Զ. — Այդ փոխադարձ օգնութեան սկզբունքը յայտնուած է նաեւ այն խոստումներով, որոնք Սուրբ Եկեղեցւոյ մէջ, Սուրբ Սեղանին առջեւ եւ հաւատաց-

եալ ժողովրդեան ներկայութեան ձեր կողմանէ կը տրուին: Փետայն երբ կը յայտարարէ թէ՛ Տէր եմ հրամանաւն Աստուծոյ, ոչ թէ տիրապետութեան իրաւունք մը կը սեփականէ իրեն, այլ պարտականութիւն կ'ստանձնէ սէր կանգնելու իւր կնոջ եւ իւր տան ամեն պէտքերուն, պաշտպան հանդիսանալ ընտանեկան պատուոյն եւ օգտին, միով բանիւ կատարել ինչ որ կը պահանջէ այրական կորովը: Հարսն ալ երբ կը յայտարարէ թէ՛ Հնազանդ եմ հրամանաւն Աստուծոյ, ոչ թէ ստրկական հրպատակութեան ներքեւ կը մտնէ, այլ կ'ընդունի ընտանեկան կեանքին միակ ուղղութեան հետեւելուն կանոնը, կը խոստանայ համակերպութեամբ եւ քաղցրութեամբ փարատելու ամեն խոչընդոտները, միով բանիւ կատարել ինչ որ կը պահանջէ կնոջական գորովը:

Է. — Ամուսնոց փոխադարձ սէրը նոյն իսկ երկաքանչիւր կողմանց առաքելնի եւ պարկեշտ կենաց գրաւականն է: Իրար շահիլ գիտնալով, իրարու պատուոյն նախանձախնդիր լինելով, իրարու բարւոյն փափաքելով եւ գարծակցելով, իրարու կամքին եւ տկարութեան դիմանելով, իրարու ճաշակներու եւ բաղձանքներու յարմարելով, իրարու բեռն ու ծանրութիւնը վերցնելով, կանուխէն առջեւն առած կ'ըլլան այն անհամաձայնութեանց, պաղութեանց, հակառակութեանց եւ դայթակղութեանց, որք դժբաղդարար մեծամեծ անտեղութեանց դուռ կը բանան եւ երկու կողմերուն ալ պատուոյն եւ երջանկութեան հաւասարապէս կը վնասեն:

Ը. — Արդէն իսկ ով որ իրեն կանոն ըրած է առաքելնի կեանքով ապրել, նա ոչ միայն իւր անձին օգուտ կը բերէ, այլ եւ ուրիշի համար ալ օգտակար կ'ըլլայ:



երբ միտքը ուղիղ է, երբ սիրտը մաքուր է, երբ լեզուն քաղցր է, երբ խօսքը անոյշ է, երբ ձեռքը արդար է, երբ ընթացքը կանոնաւոր է, երբ գործը կատարեալ է, երբ շահը օրինաւոր է, եւս եւ երբ կերուխումը չափաւոր է, երբ հանգիստը վայելուչ է, երբ զուարճութիւնը պարկեշտ է, երբ զարդարանքը համեստ է, այնպիսին ինքն ալ հանգիստ կ'ապրի, ներքին խիղճէն չտանջուիր, իւր գործոց հետեւանքէն չնեղուիր, ուրիշի ալ բարի օրինակ կ'ըլլայ, ուրիշն ալ երջանիկ կ'ընէ, եւ ամենէն ալ պատիւ եւ յարգանք եւ դիւրութիւն կը գտնէ: Այդ պայմանները եւս քան զեւս անհրաժեշտ են ամուսնոց մէջ, եւ երկու կողմերուն պարագայից հետ, որով ամեն դժուարութեանց առջեւը կ'առնուի:

Թ. — Ընտանեկան երջանկութեան մեծ գաղանխքներէն մին ալ ընչից մատակարարութիւնն եւ ծախուց կանոնաւորութիւնն է: Ըլլան աղքատ կամ իրենց բաւող, ըլլան բարեկեցիկ կամ ունեւոր, ամեն ընտանիք պէտք չէ մոռնան աշխատութիւնը եւ խնայողութիւնը: Տան մը մէջ թէ՛ այրն եւ թէ՛ կինը իրենց կացութեան եւ իրենց վիճակին համեմատ աշխատութիւն պիտի ունենան. այրն իւր արհեստով կամ տուրեւտով, կինը իւր տնական զբաղումով պիտի պահեն իրենց ընտանիքը: Եթէ հասութառու մեծատունի վիճակ ալ ունենան, այրը պէտք է իւր ձեռքը պահէ իւր հասութից իրական հսկողութիւնը, կինը իւր ձեռքէն պիտի չհանէ իւր տանտիրէնութեան ի մօտոյ հսկողութիւնը: Նոյն սկզբունքով ամեն տուն համեմատութիւն մը պիտի գնէ իւր հասութից ու ծախուց մէջ. այնպէս որ աւերորդ ծախք չընէ. եւ բոզ վանդակ հասոյթը չ'սպառէ, այլ միշտ պահեստի յաւել-

ուած մը կազմէ, եւ մանաւանդ ապառիկով ծախսելու եւ փոխառութեամբ հայթայթելու կորստաբեր ճանապարհէն պէտք է զգուշանայ:

Փ. — Որչափ եւս առաւել պէտք է հեռու մնալ անխորհուրդ շռայլութիւններէ, անկանոն զեղխութիւններէ, անվայել զուարճութիւններէ, անհամեմատ արդուզարդէ, անպարկեշտ հաճոյքներէ, անիրաւ ձեռնարկներէ, անարդար վաստակներէ, անտեղի խաղամուրութիւններէ, որք իբեւ ցեց կը կրծեն եւ իբրեւ մանրէ կը վարակեն ամենէն մաքուր տուները, եւ կը քանդեն ամենէն հոյակապ ընտանիքները, եւ կը տապալեն ամենէն հաստատուն գերդաստանները: Խոհական մատակարարութիւն եւ իմաստուն խնայողութիւն տուներ կը շինեն եւ կը բարձրացնեն. անխոհեմ մատակարարութիւն եւ անիմաստ կիրառութիւն տուներ կ'ստորնացնեն եւ կը կործանեն. եւ բարոյական խանգարմանէ յառաջ եկած նիւթական խանգարումը, սէրն ու պատիւը՝ երջանկութիւնն ու մխիթարութիւնը միանգամայն կ'ոչնչացնէ:

ՓԱ. — Աստուած պիտի օրհնէ ձեր ամուսնական միութիւնը, պիտի աճեցնէ ձեր սերունդը. մանրուկ սիրուններ պիտի ուրախացնեն ձեր տունը: Անոնց հոգն ու խնամքը պիտի կազմեն ի մօտոյ ձեզի համար նոր պարտաւորութիւններ: Երբ հարս ու փեսայդ, մայր ու հայր եղած պիտի տեսնէք զձեզ, մի՛ մոռանայք որ Աստուծոյ ձեզի տուած աւանգը՝ միայն մարմին չէ, որ մարմնոյ խնամքով միայն շտանայ. այն փոքրիկներուն հոգին ալ պահանջ ունի, միտքն ու սիրտն ալ յատուկ խնամք կը պահանջեն. դուք էք անոնց առաջին դաստիարակը, առաջին ուսուցիչը, առաջին քահանայն



եւ առաջին վարդապետը . բարութեան եւ չարութեան , առաքինութեան եւ մոլութեան , սիրոյ եւ ատելութեան տարբերութիւնները , հաւատքի , կրօնքի , ազօթքի , օրէնքի , կանոնի՝ առաջին դադափարները ձեզմէ պիտի ստանան : Այժմէն պէտք է պատրաստ գտնուիք այդ պարտաւորութեան հանդէպ :

ԺԲ. — Եւ երբ մանուկը պատանի կը դառնայ , եւ զարգացման դռները իրեն կը բացուին , ձեր ծնողական պարտաւորութիւնն ալ ի միասին կ'աճի : Անոնց լաւ դաստիարակութեան , ազգային կրթութեան , կրօնական դասցմանց եւ օրինապահ հաւատարմութեան համար՝ որչափ եւ վարժարաններ եւ ուսումնարաններ պիտի հսկեն , սակայն ձեր ձեռքն է լաւագունին եւ յարմարագունին ընտրութիւնը , ձեզի կ'իյնայ վերին հսկողութիւնը , ձեր վրայ կը ծանրանայ արգիւնքին պատասխանատուութիւնը , որ անբաժան է միջոցներու հայթայթման հետ : Անգութ է ծնողը՝ որ զաւկին ուտեստը կը ինայէ եւ զդեատը կը զլանայ . բայց աւելի անդութ պէտք է ըսել երբ սրտին սնունդը կ'անարդէ , եւ միտքին զարգացման միջոցները կ'ազահէ :

ԺԳ. — Օր մը պատանին ալ աճած է , եւ կատարեալ երիտասարդ մ'է զաւակնիդ , մի՛ կարծէք թէ ծնողական պարտաւորութիւններ կը դադրին . բարի օրինակի պարտքը կը մնայ վրանիդ աւելի ծանրացեալ . որովհետեւ հնար չէ որ առաքինի եւ պարկեշտ ըլլան երիտասարդն եւ երիտասարդուհին՝ եթէ մոլի եւ անհամեստ են հայրն ու մայրը , հաւատքի եւ կրօնքի սկզբունքով ընթանան զաւակուկը՝ եթէ անբարոյական են ծնողքը : Միւս կողմէ պէտք է հոգ տանիլ որ ժամանակին

գործի եւ շահու աէր լինի երիտասարդը , որպէս զի դատարկագորտութեամբ չզեղծանի . պէտք է ուսմունքը եւ զարգացումը այն կերպով եւ այն չափով կարգադրել որ նորահաս զաւակը անոնցմէ դիւրաւ օգուտ քաղէ , եւ ոչ թէ անհիմն ակնկարութիւններով երազանայ . պէտք է որ հասունացեալ զաւակաց բարոյականին պաշտպանութեան համար , պատեհ ժամուն անոնց ընտանեկան կեանքին ալ փոյթ եւ ջանք՝ միջոց եւ դիւրութիւն ընծայուի :

ԺԴ. — Եկեղեցւոյ հետ կը մալթենք որ Աստուած զձեզ միաբան սիրով պահեցէ եւ ի խոր ծերութիւն հասուցէ , եւ միանգամայն կ'աւելցնեմք որ մինչեւ ցվերջ Աստուած զձեզ յամենայն փորձութենէ հեռի պահեցէ : Արտաքին փորձութիւններ , ինչպէս ըսինք , իսկապէս փորձութիւն չեն՝ երբոր սիրոյ եւ օգնութեան կապը կայ . ուստի բուն իսկ եւ ներքին փորձութենէ , ընտանեկան սիրոյն խանգարումէ եւ ամուսնական կենաց աւերումէ պահէ զձեզ Աստուած անփորձ եւ անասան մինչեւ ցխոր ծերութիւն : Եթէ երբէք միտքերնէդ կ'անցնէք թէ որ եւ է կերպով կամ օրինական վճռով կատարուած բաժանում մը կամ լուծում մը կարենայ զձեզ փորձութենէն ազատել , վտահօրէն դիտցէք թէ ընտանեկան մխիթարութեան կամ երջանկութեան վերանորոգում չբերէր : Իժիշկներ ալ երբեմն մարմնոյ մի մասը կտրելով դարմաններ կը կատարեն , այլ խեղ եւ անդամաղուրկ կը թողուն բժշկեալը : Երբ հոգեւոր բժշկութիւնն ալ նոյն տեսակ դարմանի կերառութեան կը դիմէ , խեղանդամ մնացած ինելու անտեղութիւնը վերցուած չըլլար :

ԺԵ. — Ամուսնական կենաց պատկանեալ կարեւոր



խրատներուն հետ հարկ կը սեպեմք յիշել այստեղ, թէ պէտք է որ նշանադրութեան եւ պսակադրութեան գործողութեանց մասին անվրէպ եւ անթերի պահպանուին որչափ ինչ յատուկ կոնգակով մը, 1901 տարւոյ Սեպտեմբեր ամսոյ սկիզբը եւ 210 թուահամարով հրամայած եմք, եւ զորս համառօտակի քաղելով կը յիշեցնեմք ուրիշ կարեւոր քանի մը կէտերու հետ :

1. Ընտանեկան խօսքկապը պաշտօնական գործողութիւն չէ, Պատրիարքարանը զայն չճանչնար. եւ քահանայք չեն կրնար զայն օրհնելով նուիրադործել :

2. Նշանադրութենէ պսակադրութեան միջոցը պէտք չէ տարապայման երկարել :

3. Նշանուող փեսայացուին եւ հարսնացուին կամքն ու յօժարութիւնը օրինաւոր կերպով պիտի առնուի եւ վաւերացուի :

4. Նշանադրութեան եւ հրամանիի համար Պատրիարքարանի իրաւունքները պէտք է կանոնաւորապէս վճարուին. ինչպէս եւ ծխատէրներու իրաւունքները, զորս ի միասին գանձել սովորութիւն եղած է :

5. Վճարուելիք իրաւունքները աստիճաններով որոշուած են, եւ իւրաքանչիւր անձի աստիճանը Պատրիարքարանէ կ'որոշուի իւր կացութեան՝ եւ ոչ թէ իւր յօժարութեան համեմատ :

6. Ծխատէրներու կամ քահանայներու արդիւնեալ է վճարմանց համար միջնորդութիւն կամ փոխանորդութիւն ընել, այլ պէտք է որ երկու կողմեր ուղղակի Պատրիարքարան ներկայանան :

7. Փեսայացուն եւ հարսնացուն պէտք է պսակէն առաջ՝ Սուրբ Խորհրդոց մօտենալով եւ աղօթքով եւ ու

ղորմութեամբ իրենց քրիստոնէական բարեպաշտութեան պարտքերը կատարեն :

8. Պսակի օրհնութիւնը անխափան եւ անպատճառ եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի :

9. Նշանի օրհնութիւնը Պսակի օրհնութեան առթիւ եկեղեցւոյ մէջ չկրկնուիր, Հալաւի օրհնութիւնը տան մէջ կը կատարուի, իսկ Թագվերացը կրնայ եկեղեցւոյ մէջ ալ կամ տան մէջ ալ կատարուի :

10. Մատաղ մանուկներ կամ տհաս երիտասարդներ չեն կրնար կնքահայր կամ խաչեղբայր կանգնել եւ նորապսակներուն գլխուն խաչ բռնել :

11. Պսակներու առթիւ հարսանեկան ծախքերը պէտք է յոյժ չափաւոր ըլլան, եւ գովելի են անոնք որ օրինակելի պարզութեամբ կը կատարեն իրենց հարսնիքները եւ ծախուց խնայութենէն բարեգործական հաստատութեանց մաս կը հանեն :

12. Հարսնեւորներուն կը յանձնարարուի զգեստուց եւ զարդուց շւայլութենէ զգուշանալ եւ եկեղեցւոյ մէջ եկեղեցւոյ վայել պարզութեամբ երեւիլ :

13. Միայն փորձանաւորներուն կամ իրենց վիճակը հանրութեան աչքէն ծածկելու պարտաւոր եղողներուն՝ բացառապէս կրնայ Պատրիարքարանէ ներուիլ եկեղեցիէն դուրս Պսակ կատարել :

14. Եկեղեցեաց մատակարարներուն եւ Թաղական Խորհուրդներուն արդիւնեալ է Պսակներուն եկեղեցեաց մէջ կատարուելուն համար աւելորդ ծախքեր պահանջել. բայց եթէ երբ հարսնիքի տէրեր արտասովոր պատրաստութիւններ կը խնդրեն :

15. Միւս կողմանէ հարսնիքի տէրերուն ալ կ'աղ-



դարարեմք որ ներեալ չէ հարսանեկան ուրախութեան անուամբ խնջոյքի, երեկոյթի, հացկերոյթի, կերուխուձի, երգուխաղի առատ ծախքեր ընել. իսկ Պատրիարքարանի եւ Եկեղեցւոյ վճարմունքները նուազեցնելու կամ ջնջելու համար անհիմն պատճառանքներու կամ հնարքներու դիմել :

ԺԶ. — Խօսքերն իս վերջացնելու համար կը յիշեցընեմք, որ եթէ ամուսնութիւնը իւր նախնական եւ նիւթական վիճակին մէջ նկատուած է իբր բնական օրինաց ենթարկեալ գործողութիւն, եւ եթէ ընտանեկան կեանքը իւր ընկերական շրջանակին հետ ունեցած յարաբերութիւններով նկատուած է իբր քաղաքական օրինաց ենթարկեալ գործողութիւն, սակայն քրիստոնէական հաւատոյ սկզբունքներուն համեմատ Եկեղեցւոյ Սուրբ Խորհուրդներուն բարձրութեան ելած է, եւ եղած է կրօնական եւ եկեղեցական օրինաց ենթարկեալ գործողութիւն : Դուք, սիրելիք, որ քրիստոնէական սուրբ հաւատքով լուսաւորեալ, եւ առաքելական դաւանութեամբ զօրացեալ, եւ սուրբ Հարց ողջամիտ վարդապետութեամբ աճեցեալ, եւ Ուղղափառ Եկեղեցւոյս կանոններով առաջնորդեալ էք, չլլայ թէ լոկ բնական կամ լոկ քաղաքական օրինաց տեսակէտով նկատէք այն ծանր գործը, զոր կը կատարէք. այդ կրնայ ձեզ տկարացնել ձեր բարոյական եւ քրիստոնէական պարտաւորութեանց մէջ : Ամուսնական միաւորութիւնը կը կապէ զձեզ ոչ միայն ի մարմին մի, այլ եւ ի հոգի մի եւ ի սիրտ մի : Միտուընդունող մէջ հաստատուն գրէք, թէ Աստուած է որ կը միաւորէ զձեզ իւր անուամբ գործող Եկեղեցւոյն իշխանութեամբ. Աստուած է որ ամուսնական բարոյականութեան՝ ըն-

տանեկան պարկեշտութեան եւ որդեւէր ծնողութեան պարտքերը դրած է ձեր վրայ. եւ Աստուած է որ ձեր արժանաւորութեան համեմատ պիտի նայի ձեր գործերուն եւ պիտի տայ ձեզ իւր շնորհքները. եւ եթէ Աստուծոյ երկիւղիւ կ'ապրիք եւ կը կատարէք ձեր ամուսնական պարտքերը, այն ատեն կ'արժանանաք Աստուծոյ օրհնութեան, որովհետեւ օրհնեսցի ամենայն մարդ որ երկնչի ի Տեառնէ : Այսպէս ուրեմն օրհնեսցէ զձեզ Տէր, եւ տեսչիք դուք զբարութիւն զամենայն աւուրս կենաց ձերոց. խաղաղութիւն Տեառն եղիցի ՚ի վերայ ձեր, եւ տեսչիք դուք զսրբիս որդւոյ ձերոց, եւ կեցեալք արդարութեամբ, սրբութեամբ եւ աստուածպաշտութեամբ՝ ըստ հաճոյից կամաց Տեառն, օրհնեսչիք անգաղար զՏուրին ամենայն բարեաց, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից :

Տուեալ ի Պատրիարքարանիս Կոստանդնուպոլսոյ, ի դուռն Մայր Եկեղեցւոյ Սուրբ Ասուածածնի, յամի Տեառն 1903 յանաջին աւուր Մայիսի, եւ ի բուխ Հայոց ՌՅԾԲ ի ԻԴ Անեկանի, ընդ 316 բուսնամարտ Կոնդակաց :





Հայաստանի Ազգային գրադարան



NL0438226

# ՆՇԱՆԻ ԵՒ ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՐ

ՎՃՈՐԵՆԻ ՊԱՏՐՈՂԱԴՐԱՆՈՒՄԻ ՄԵՏՈՒԿԻՆ

ՎՃՈՐԵՆԻ ՏԱՆՆՈՒՅՑ ՔԱՆՎԱՏԱՅԻՑ

ԱՍՏՈՒՆ	ՓԵՍԱՍԱՅՈՒԽ ԿՈՂՄԵՆ				ՀԱՐՄԱՍՅՈՒԽ ԿՈՂՄԵՆ				ԻՌԱՔԱՆՅՈՒՐ ԿՈՂՄԵՆ ԻՐ ՏԱՆԵՐԵՑԻՆ			ԿՆՔԱՇՈՐ ԿՈՂՄԵՆ						
	Խաչագից	Հա ցագից	Հրամանի	Կոնդակագից	Վկայագիր	Հացագից	Հրամանի	Կոնդակագից	Վկայագիր	Նճանից	Հրամանից	Պսակից	Հարսնառից	Հարսից	Ցաներեցից	Փագվերացից	Փեսից	Ցաներեցից
Ա.	1000	500	500	20	200	1500	500	20	200	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ
Բ.	600	300	300	20	120	900	300	20	120	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ
Գ.	400	200	200	10	80	600	200	10	80	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ
Դ.	300	150	150	10	60	450	150	10	60	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ
Ե.	200	100	100	10	40	300	100	10	40	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ
Զ.	150	75	75	10	30	225	75	10	30	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ
Է.	100	50	50	5	20	150	50	5	20	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ
Ը.	80	40	40	5	10	120	40	5	10	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ
Թ.	50	25	25	5	5	75	25	5	5	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ
Ճ.										Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ	Ըստ հանդիպ

ԾԱՆՈԹ. — 1. Կերտեր սիւնակին մէջ, Կերտեր վնասները Հարմարի Նաւէին Կոնյակից փետցրել ալ կը վնասէ Հարմար-ին Տաներէցին հարմարի ճամնակի — 2. Փարթիկացի ճամնակի Տաներէց փանդոյն գինի բաժնած տանն կրնայ Հանդիպողանքին կամուրջ խաւար ընդունիլ — 3. Երբոր ՆշանատուՅնէն ետքը մէկ կամ միւս կողմը որ եւ է պատմուտաւ Նշան եր ետ ընել հալի լլկայ, ըստ որոյ ճանջ Ազգ. ՎայցուՅնան, ԿոնյակուՅնան համար վնասուած զուճարին չափ չորէն պիտի վնասուի Ազգ. Կերտողան տնտեսին: — 4. Ձրի կը կատարուի միայն տնայն խանութուՅնին: որոց չբաւարուիլէնն հաստատուած է Փայտական Խորհրդոյ վկայու Յնանք եւ ֆոխանորդացանքին:





$\frac{1}{0}$  418

55-591